Երևանի Լեոյի անվան N65 ավագ դպրոց»

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ *Ներառարկայական կապերը գրականության դասերին*

Հետազոտող ուսուցիչ՝ Եղիազարյան Հայարփի

Արարատի ավագ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն. 3
2. Ներառարկայական կապերը գրականության դասին. 4
3. Ներառարկայական կապերի գործադրման եղանակները. 5
4. Ներառարկայական կապերը ուսուցման հաջողությունների անհրաժեշտ պայման. . 5
5. Ներառարկայական կապերը որպես գիտելիքի, ճաշակի, ինքնաճանաչողության և ինքնազարգացման կարևորագույն միջոց. 6
6. Եզրակացություն. 19
7. Գրականության ցանկ. 20

Ներածություն

Կրթությունը գիտելիքի, հմտությունների, արժեքների,ավանդույթների ու սովորույթների ձեռքբերումն է: Այն պահանջում է ապահովել կյանքի սերտ կապը՝ արագ արձագանքելու ժամանակի պահանջներին: Հանրակրթական դպրոցի պահանջներին համապատասխան այսօր մեծանում է առարկաների միջև կապերի բացահայտումը, դերն ու նշանակությունը: Այն ճիշտ և խելացի կազմակերպելու դեպքում կարելի է զարգացնել սովորողի ինքնուրույն մտածողությունը, խոսքարվեստը, կընդլայնվեն սովորողների գիտելիքները: Իսկ դրան հասնելու համար ուսուցչին կօգնեն ներառարկայական ու միջառարկայական կապերը: Միջառարկայական և ներառարկայական կապ ստեղծելու շնորհիվ դասի ընթացքում ուսուցիչը սովորողների մեջ զարգացնում է ճանաչողական ակտիվությունը, նրանք սովորում են կատարել քննարկումներ, վարել բանավեճեր, պնդել իրենց տեսակետը, փաստարկներ բերել ու հիմնավորել: Այս ամենին կարելի է հասնել բազմաթիվ մեթոդների, ինքնատիպ ձևերի համադրումով՝ բնականաբար հաշվի առնելով նյութի առանձնահատկությունները, սովորողի ընդհանուր և առարկայական պատրաստության մակարդակը:

Գրականության դասը անհնար է կազմակերպել առանց ներառարկայական և միջառարկայական կապի, որն էլ ստիպում է ուսուցչին անընդհատ պրպտել, ինքնակրթվել ու ինքնազարգացման պրոցեսից դուրս չգալ:

Ներառարկայական կապերը գրականության դասին

Ուսուցման ամեն մի եղանակ իր մեջ ընդգրկում է մեթոդների, հնարքների ու ձևերի փոխադարձաբար պայմանավորված ու ամբողջական մի համակարգ: Գրականության ուսուցման ընթացքում կազմակերպվող աշխատանքը բավական բազմատեսակ է, գործադրվող մեթոդներն ու ձևերը՝ բազմազան ու տարաբնույթ:

Աշակերտի ինքնուրույն մտածողության, հարուստ հոգևոր աշխարհի, ազգային հոգեբանության ձևավորման գործում մեծ է գեղարվեստական ընկալի հուզական ու գաղափարական ամբողջությամբ, հասկանա գրական կերպարների հոգեբանական բարդ անցումները, գաղափարական աշխարհայացքային շերտը, անհրաժեշտ է գրականության դասին օգտագործել բազմազան մեթոդներ և հնարքներ: Գրականության ուսուցման ընթացքում աշակերտների ինքնուրույն մտածողությունը և խոսքարվեստը կարելի է զարգացնել հայտնի մեթոդների, ինքնատիպ ձևերի խելացի ու նպատակասլաց համարումով: Այդ համադրումը կատարվում է՝ հաշվի առնելով ուսուցանվող նյութի առանձնահատկությունները, աշակերտի ընդհանուր և առարկայական պատրաստության մակարդակը: Գրականության ուսուցման հետաքրքիր մեթոդներից է ներառական կապերի կիրառումը: Ներառական կապեր կարելի է ստեղծել ոչ միայն տարբեր հեղինակների կենսագրական փաստերի, պատմական դեպքերի ու երևույթների, լեզվի ու ոճի առանձնահատկությունների, կառուցվածքային բաղադրամասերի, պատկերավորման միջոցների համակարգի, իմաստային տարրերի համեմատության ժամանակ, այլև գրական երկերում ազգային մտածողության տարբեր դրսևորումների և հերոսների, դրա հետ պայմանավորված հոգեբանական տարբեր իրավիճակների քննության ժամանակ:

Ներառարկայական կապերի գործադրման եղանակները.

1. Ուսումնական պրոցեսում անդրադարձ կապերի օգտագործումն է, որն ամենից շատ կապվում է ներառարկայական կապերի տեղին օգտագործման հետ։
   Այն, ինչ սովորողը անցել է նախորդ դասերին կամ տարիներին, պետք է կրկնվի, ամրապնդվի, դառնա կարողություն, հիմք ծառայի նորի յուրացման համար։
2. Մյուս կարևոր եղանակը ձեռք բերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումն է ուսուցման պրոցեսում։ Այն տարաբնույթ գիտելիքներն ու կարողությունները, որոնք երեխան ձեռք է բերել, պետք է հմտորեն օգտագործել ուսուցման պրոցեսում։

Ներառարկայական կապերը ուսուցման հաջողությունների անհրաժեշտ պայման.

Բազմակողմանիորեն զարգացած և մեթոդական հնարավոր կարողություն ունեցող ուսուցիչը կկարողանա ներառարկայական կապեր ստեղծել տարբեր գրողների՝ նույն թեման ու հարցադրումը շեշտող գեղարվեստական գործերի միջև։ Ուսուցիչը համեմատական բնութագրմամբ վերլուծաբար բացահայտում է կերպարների վարքագծի հոգեբանական-սոցիալական դրդապատճառները՝ կապված ազգային մտածողության և կեցության հետ։ Աշակերտի ծանոթացումը տարբեր հեղինակների կերտած նույնատիպ հերոսների խոհերի ու զգացմունքների, մտորումների ու գաղափարների հետ նպաստում է նրա գեղագիտական ճաշակի, ճանաչողական հետաքրքրությունների, հոգեկան կերտվածքի, անհատականության ձևավորմանը։ Ներառարկայական կապերի օգնությամբ աշակերտը կկարողանա տեսնել հերոսների ազգային բնավորության գծերը, հանրային և անձնական փոխհարաբերությունների սերտ կապակցվածությունը, կյանքի, բնության, միջավայրի մարդկային և հանրային հարաբերություններով պայմանավորված հոգեվիճակները, դրանց տարբեր դրսևորումները։ Աշակերտը կկարողանա յուրաքանչյուր կերպարի հոգեբանական,

գեղագիտական բարոյական նկարագիրը կերտել իր դարաշրջանի սոցիալ-տնտեսական, հասարակական-պատմական մթնոլորտում:

Ներառարկայական կապերը որպես գիտելիքի, ճաշակի, ինքնաճանաչողության և ինքնազարգացման կարևորագույն միջոց

Ներառարկայական կապեր կարելի է ստեղծել Թումանյանի <<Անուշ>> պոեմի և Շեքսպիրի <<Ռոմեո և Ջուլիետ>> ողբերգության միջև, որտեղ երկու հեղինակներն էլ մարդկային հոգեբանության ոլորտներում հայտնաբերում են մեծագույն սիրո խորհուրդը, դրանով պայմանավորված մարդկային հոգեվիճակների տարբեր շերտեր՝ շոշափելով այդ աստվածային զգացմունքի տարողության սահմանները: Անուշը և Ջուլիետը միմյանցից տարբերվում են կենցաղով, ապրած ժամանակով, բարքերով ու սովորույթներով , սակայն շատ ընդհանուր եզրեր կան նրանց հոգեբանության շերտերում:Ուսուցիչը ներառարկայական կապերի օգնությամբ պետք է կարողանա աշակերտին ցույց տալ նրանց սիրո հոգեբանության հատույթներում ընդհանրականը՝ համամարդկայինը, և անհատականը՝ ազգայինը: Աշակերտը պետք է գտնի այն խորհրդավոր պահը, որտեղ Անուշը և Ջուլիետը կտրվում են ազգային հոգեբանության և մտածողության շրջանակներից և բարձրանում համամարդկային հնչեղության հասնող հոգեվիճակների:

Նախ՝ ուսուցիչը պետք է աշակերտին բացատրի Թումանյան և Շեքսպիր կապի խորհուրդը: Ի՞նչն է պատճառը, որ թումանյանական աշխարհը մեծ առնչություններ ունի Շեքսպիրի ստեղծագործությունների հետ: Թումանյանի ստեղծագործական որոնումների վրա մեծ հետք է թողել Շեքսպիրը: Ըստ Թումանյանի՝ Շեքսպիրը գրող- արվեստագետի իդեալն էր, որի մեջ համամարդկայինն ու ազգայինը կազմում են մի ներդաշնակ ամբողջություն:

<< Գերազանց է բրիտանական հանճարի փայլը,որը իր ճաճանչները մի կողմից զարկում է մինչև էսքիլեսի ու Սոֆոկլեսի ժամանակները,մյուս կողմից դեպի գրականության

ապագա:Եվ ամեն մի գրող,ինչ աշխարհում էլ ասպարեզ իջնի,տեսնում է իր ուղին արդեն լուսավորված նրա շողերով ,և գրեթե անխտիր,շատ քիչ բացառությամբ,ամենքն էլ խոնարհվում են նրա առջև[1]>>:

Թումանյանի գնահատմամբ Շեքսպիրը եղել է համամարդկային մտքի կատարյալ թռիչքներից մեկը, որը միացնում և որից բաժանվում են գրականության բոլոր ճանապարհները:<<Գյոթեն հանճարեղ ստեղծագործող է, բայց Շեքսպիրն ավելի մեծ է: Նա զարհուրելի թափ ունի, խորություն, ուժ, նրբություն: Նա տարերային է, նա ինքը բնությունն է: Բնության բոլոր երևույթները կան նրա մեջ՝ և՛ կայծակ, և՛ հեղեղ, և՛ արև, և՛ ծով, և՛ ամեն ինչ, բայց իշխող արևն է: Շեքսպիրն ինքը տիեզերք է>> - ասում էր Թումանյանը[2]: Մարդկային հարաբերություններում այդ կենսատու արևն է փնտրել նաև Թումանյանը՝ փորձելով թափանցել մարդկային հոգու և սրտի անդունդները, այդ խորախորհուրդ ափերից գտնել գեղեցիկը, հավերժը կյանքում և տիեզերքում:

Ուսուցիչը պետք է նշի, որ աշխարհի տարբեր անկյուններում ծնված այս երկու սիրող սրտերը՝ Անուշն ու Ջուլիետը, տարբեր են իրենց միջավայրով, ազգային մտածողությամբ և հոգեբանությամբ, սակայն ունեն հոգեբանական ընդհանուր շերտեր, որտեղ նրանք հարազատանում են և ներդաշնակվում:

Ե՛վ Շեքսպիրը, և՛ Թումանյանը տեսանելի են դարձնում սիրո՝ դեռ բողբոջից նոր ծլարձակվող առաջին թրթիռները, սիրո առաջին տագնապն ու անհանգստությունը, որը սիրահարին կտրում է հողից, տանում տիեզերքի աստղե ոլորտները, ուր սիրո հրդեհի խելացնոր բոցերը միաձուլվում են տիեզերական լույսերին: Սրտի ու տիեզերքի միաձուլման պահը դառնում է սիրող սրտի՝ սիրո ցավերում ու լույսերում թևածող անկրկնելի մի հոգեվիճակ, երբ մարմնից դուրս է թռչում սիրտը, թևածում երկնային ոլորտներում՝ ձուլվելով աստղերի լույսին: Հոգու սլացքի այս վեհագույն պահն է բանաստեղծականացվել երկու գրողների երկերում: Սիրո մեղեդու ծաղկունքն է ապրում Անուշը լեռների փեշերին ծվարած հայոց նահապետական եզերքում, սիրո հուզաթաթավ թրթիռներն են պարուրել Ջուլիետին քաղաքակիրթ աշխարհի մի անկյունում: Նույնն են նրանց հոգեվիճակները, սիրո

[1] Հ.Թումանյան «երկերի լիակատար ժողովածու, » հ7 Երևան 1995թ էջ 230
[2] Ն.Թումանյան «Հուշեր և զրույցներ» Երևան 1987թ էջ 215

անհանգիստ ելևէջները, այն հզոր ներքին լույսը, որը կուրացրել է նրանց, կտրել շրջապատից՝ բարձրացնելով երկնային լուսե եզերքներ, ուր թռչում է սիրո հրդեհում այրվող մարդկային հոգին.

-Ախ՝ սիրտըս, նանի՛, չըգիտեմ ընչի[3],

Մին լաց է լինում սևակնա՛ծ, տըխո՛ւր,

Մին թև է առնում, ուզում է թըռչի,

Չըգիտեմ՝ թե ո՛ւր, չըգիտեմ՝ թե ուր. . . .

Սիրո ծաղկունքի այս անմեկնելի հույզերն է ապրում նաև Պուշկինի հերոսուհին՝ Տատյանան (<<Եվգենի Օնեգին>>)։ Սիրո զեղումների այս բարդ հոգեվիճակում է Տատյանան. սիրո նույն բնական թրթիռները, անհուսության ալիքներում թևածող հոգին, սիրո թովիչ անուրջները և լուսե ցնորքները.

Վաղուց էր մատաղ կուրծքը փոթորկվում

Տվայտանքներից սրտի անմեկին.

<<Ա՛խ, սիրտս է տխուր, դայա՛կ իմ բարի,

Խեղդվում եմ կարծես, շունչս է կտրվում,

Ուզում եմ լալ ու հեկեկալ այնպես

Ոչ, ես հիվանդ չեմ. . .

Օ՛ . . . գիտե՞ս դայակ, սիրահարվա՛ծ եմ[4]>>։

Բանաստեղծական պատկերներում բացահայտվում են սիրո փոթորկումները։ Ներքին խռովքի նույն թրթիռներն են համակել Շեքսպիրի հերոսուհուն։ Սիրո քաղցր անուրջներում սպասման ցավից ելք գտնելու համար սիրահար հոգին մղվում է դեպի խորհրդավոր

[3] Հ.Թումանյան «Երկերի լիակատար ժողովածու, » հ1 Երևան 1985թ էջ 194
[4] Ա.Պուշկին «Ընտիր երկեր» հ 3 Երևան 1956, էջ 62

հեռուները, սակայն կասկածները չեն փարատվում (նույն կասկածը, սիրո ալիքներում ավելին ըմբոշխնելու ցանկությամբ է համակված նաև Անուշը), և կրկին անհանգստության շերտեր են թափանցում հոգու ծալքերը։ Եվ այդ խորհրդավոր ափերում Ջուլիետը փորձում է մերթ ցավի ու մորմոքի եզրերը գտնել, մերթ սիրո անհագ ծարավը հագեցնել, մերթ աստվածային ուժ է տենչում սիրո հրդեհում այրվելու համար.

Եկ, պարկե՛շտ գիշեր,

Եվ դու, սևազգեստ ամոթխած տիկին,

Եվ սովորեցրու՝ ինչպե՞ս վաստակեմ խաղի մեջ մի սեր,

Եկ դու, քողարկիր քո սև թիկնոցով իմ արյունը կույս,

Որ թշերիս մեջ թափահարվում է. կորով տուր հոգուս,

Որ անզուսպ սերը պարզ զգաստություն համարի միայն[5]։

Հերոսների այս հոգեվիճակը՝ դրամատիկ անցումներով, խտացնում է սիրահար խորհրդավոր ներաշխարհը, ուր <<տիեզերական աշխարհի մեծ շնչառությունն է>>։ Սերը բանաստեղծական տողերում դառնում է շարժում, ալիքվում, հրդեհվում՝ ձգտելով տիեզերքի անհունները, ուր բյուրեղանում է մարդկային հոգին։

Խորանում են սիրո, սպասումի, վայելումի բնական շերտերը՝ միաձուլվելով մարդկային հոգու կենսասիրական մղումներին։ Գույների, հնչյունների, ներդաշն համեմատությունների օգնությամբ բացվում է սիրո աշխարհը՝ իր դրամատիկ փոխակեպումներով, հույզերի և հույսերի անընդհատ փոթորկվող հոգեվիճակներով։ Ուսուցիչը, աշակերտին տեսանելի դարձնելով Անուշի և Ջուլիետի հոգեկան ապրումների ընդհանրությունը, պետք է նշի, որ ահա այդ կետում, սիրո ծաղկունքի բանաստեղծական այդ ակնթարթում նրանք նույնանում են՝ դուրս գալով ազգային մտածողության սահմաններից։

[5] Վ.Շեքսպիր «Ընտիր երկեր» 2 հատորով, հ 1, Երևան 1964թ էջ 703

Ահա այստեղ էլ նույնանում է Շեքսպիրի և Թումանյանի բանաստեղծական մեկնակետը. մարդկային հարաբերություններում ամենազորեղը ճշմարիտ սիրո ուժն է։ Այդ ուժի տիեզերական սահմաններն են որոնում երկու հանճարեղ հեղինակները։ Նրանց երկերում մեծ սիրո դրաման չի դառնում բանաստեղծի երևակայության մեջ ծնված պատրանք. իրական պատկերներին միաձուլվում են ստեղծագործական խոյանքը և բանաստեղծական մտքի տիեզերական թռիչքը։ Այդ մեծ թռիչքից է ծնվում նրանց հանճարեղ ստեղծագործությունների պատումի ուժը։ Նրանցից յուրաքանչյուրը նյութն իմաստավորել է սեփական ժողովրդի կենսազգացողության դիմակետից, սեփական հոգու թելանդրանքով վեհություն հաղորդել իր հերոսների զգացմունքներին ու ձգտումներին։ Յուրաքանչյուրը հերոսների ազգային հոգեբանությամբ ու բախտով պատկերել է իրական կյանքի բազմաբնույթ հորձանքներում ալիքվող սիրո տառապանքի համամարդկային հոգեվիճակներ։ Կյանքի, աշխարհի և մարդկային փոխհարաբերությունների ոլորտը տարբեր են, սակայն դրամատիկ-ողբերգական գրեթե նույն կտրվածքով են իմաստավորվում սիրո ցավն ու սիրո ուժը։

Մեծ սիրո որոնման ճանապարհին են և՛ Անուշը, և՛ Ջուլիետը։ Միջավայրի հետ կապող հազարավոր թելեր շղթայում են մեծ սիրո կայացումը։ Սիրո ստեղծագործությունների ակունքը երկու ստեղծագործություններում էլ դառնում է միջավայրը։ Նրանց շրջապատող կյանքի շղթան, անընդհատ ոլորվելով, լայնանում է՝ մեծացնելով հերոսի և միջավայրի միջև առաջացած անջրպետը։ Կյանքի հնքը փշրում է սիրո սահմանները։ Շրջապատի բազմազան իրավիճակները հյուսում են այն բոլոր տեսանելի և անտեսանելի խոչընդոտները, որոնք փորձում են խախտել սիրո՝ ներդաշնակ հույզերով նորոգվող զուգորդումները։ Այդ պատճառով էլ սիրո երգը մերթ թևածում է երջանկության, երանության անուրջներում, մերթ գալարվում անապ տխրության ալիքներում։ Միջավայրում իշխող ներհակությունները՝ մի դեպքում նահապետական բարքերն ու սովորույթները, մյուս դեպքում՝ հայտնի գերդաստանների հինավուրց վեճը և դրանից ծնված ատելությունը, խոր հակասություններ են առաջ բերում սիրո եթերային աշխարհում, ուր կորչում են իրականության և երազի սահմանները։ Ազգային մտածողության շրջանակներում անլուծելի թվացող այդ ներհակությունները փշրում են սիրո երկրային սահմանները, սակայն այն նոր լույսով

հրդեհվում է տիեզերական ոլորտներում. սա է հավերժական սիրո լինելության խորհուրդը, որն է հաստատում են երկու մեծ հեղինակները։ Ճշմարիտ սիրո թումանյանական և շեքսպիրյան ըմբռնումը, որը չի ընդունում շեղումներ ու փլուզումներ, անդիմադրելի անցումներ, նույնանում է այս կետում՝ որպես հավերժական սիրո յուրօրինակ փիլիսոփայություն։ Այս հեղինակները գեղարվեստորեն հայտանաբերում են սիրո՝ անուրջների թևերին հյուսված աշխարհը, իմաստավորում սիրող սրտին բանաստեղծականացման շերտերը, երբ սիրտը ձգտում է տիեզերքի խորհրդավոր անսահմանությանը, ուր այնքան ներդաշնակ են սիրո թրթիռները։ Գրողների տարբեր աշխարհներում միաձուլվում են հույզերն ու երազները, սիրո լուսե ցնորքներն ու կորուստի ծանր դրաման։

Սիրո ցավն ու տառապանքը Անուշի և Ջուլիետի հոգում ծնունդ են առնում իրականության ոլորտներից, ծառս լինում՝ հակադրվելով կյանքի օրենքներին։ Նրանց սիրո ցավը բորբոքվում է սոցիալական ոլորտում՝ անձնականից վերաճելով, ստանալով համամարդկային հնչեղություն։ Մարդկային բարդ հարաբերություններում փոթորկվում են նրանց զգացմունքները, մեծանում են կորստի և մերձեցման սահմանները, և սիրո չքնաղ հեքիաթը խաթարվում է իրականության դաժան հորձանքում։ Փշրվում է սիրո երգը, անհանգստությունն է համակում սիրահար սրտին։ Անորոշության, անհանգստության ալիքներում թևածում է սիրահար հոգին, ափեափ զարկվում։ Սիրո կորստի մտավախությունը համակում է նրան. տագնապում է սիրտը. . . Սիրտը, որը միշտ նախազգում է մոտալուտ վտանգը. . .

Ա՜խ իմ բախտը կանչում է ինձ,

Չեմ հասկանում՝ դեպի ուր. . .

Դողում է պաղ նըրա ձենից

Իմ սիրտը սև ու տխուր[6]. . .

[6] Հ.Թումանյան «ընտիր երկեր» հ 1Երևան 1985թ

Թումանյանը հայտնաբերում է մարդու թաքուն, աննկատելի հոգեվիճակներ՝ նուրբ անցումներով ու շարժման ընթացքով: Մոտալուտ ցավի նախազգացումը փոթորկում է Անուշի հոգին: Սիրո երջանիկ ակնթարթներ մարում են կորստյան տագնապի ալիքներում: Թումանյանը գտել է ներքին խռովքի մեջ գտնվող սիրահար սրտի նուրբ զարկերը, որոնց թրթիռները տեսանելի են դառնում բանաստեղծական պատկերում: Նույն հոգեվիճակն է ապրում նաև Ջուլիետը. փոթորկված է հոգին, տագնապում է սիրտը և այդ տագնապող փոթորկումների մեջ բախվում են երազն ու իրականությունը, շոշափելին ու երևակայական, իրականն ու անգոն.

Աստվա՛ծ իմ. հոգիս չարագուշակ է:

Հիմա, որ ցած ես, կարծես այստեղից

Ես քեզ տեսնում եմ գերեզմանի մեջ

Կամ աչքս է խաբում, կամ դու ես գունատ[7]:

Առանց մանրամասների մեջ ծավալվելու՝ երկու հեղինակներն էլ բնական երևույթի և մարդկային էության ընդհանրացումներն են տալիս, շեշտում կեցության այդ պահի խորհուրդը, որը դարձյալ դառնում է բնորոշ հոգեվիճակի կերպ:

Սիրո անհանգիստ տագնապներին բարդ հոգեվիճակն է հայտնաբերում սիրո նաև Պուշկինը Տատյանայի նուրբ հուզաշխարհում: Այստեղ թումանյանական պատկերները հարազատանում են Պուշկինի պատկերավորման համակարգին: Նրանք սիրո անչափելի հուզումներն ու տագնապները փորձում են իմաստավորել բնության երևույթների խմբային ձայնակցությամբ. միախառնվում են մարդկային շունչն ու բնությունը, ճակատարգրի խորհրդավոր արահետներում և սիրո լուսե հեքիաթների անհայտ հեռուները: Թումանյանը Համբարձման առավոտվա բազմախորհուրդ գեղեցկություններն է բացում՝ դրան ներդաշնակելով մարդկային տարբեր հոգեվիճակներ: Տրոփում են դեռափթիթ սրտերը, անզոր կանգնում ճակատագրի ու բախտի մատուցելիք անակնկալների առջև: Նրանց հոգու խռովքներին համահունչ է նաև բնությունը.

[7] Վ.Շեքսպիր «Ընտիր երկեր» 2 հատորով, հ 1, Երևան 1964թ

Պըտույտ է տալիս վիճակը նորից

Քուշուշըքը գըլխին ծաղիկ Ծաղկուններ,

Թընդնում <<ջան գյուլում>> մատաղ սըրտերից։

Հետը գըվգըվում են էն ծաղկոտ սարերը։

Պուշկինն էլ, թափանցելով ժողովրդական կյանքի ու կենցաղի, սովորույթների բազմախորհուրդ խորքերը, բացում են անհատի հոգեբանությունը ներդաշնակելով բնության տարերքի, կյանքի հնքին։ Այստեղ էլ Զրօրհնեքի տոնն է իր մեծագույն խորհուրդը ստանում.

Զրօրհներքն էլ. ի՜նչ ուրախություն.

Բախտ են բաց անում ջահելներ խնդուն,

Որոնց դեմ կյանքի հեռաստանը ջինջ

Փռված է անյպես լա՜յն ու անսահման։

Հյուսվում է ժողովրդական կյանքի մի չքնաղ հեքիաթ, որտեղ մերթ ուրախության փոթորկումներ են, մերթ՝ հուսահատ ու վախվորած հնչյուններ։ <<Երբ խավարչտին երկնակամարով սուրում էր հանկարծ մի ասուպ դժգույն>>, այդ պային սիրահար հոգին սրտի աղոթքներ հղում առ աստված, <<ու մինչև մարեր այդ աստղը, շտապ իղձն էր շշնջում իր մատաղ սրտին>>։ Դա այն սուրբ, վեհ պահն էր, երբ մարդկային հոգու երազը ձուլվում էր բնությանը։ Եվ կյանքի բնական ընթացքի ժողովրդի մտածողությամբ խորհուրդը իր մեջ խտացնող արարողության մեջ գրողները գտել են այդ չքնաղ ակնթարթը, այդ ակնթարթի մեջ՝ հոգու մեղեդին։ Բանաստեղծական նման հյուսվածքները, զգացմունքերը, հույզը, երազը դարձնում են ավելի տեսանելի և իրական։ Այդ ակնթարթի մեջ բացվում են սիրո լայն հորիզոնները, ուր իրական աշխարհը և երազային միաձուլման պահերում հագեցնում են միմյանց՝ անուրջներին ու տեսիլքներին բերելով ապրումների իրականություն, սիրո հրաշքի կայացմանը՝ հավաստիությանը։

Զուգահեռ զարգացնելով հերոսների հոգեբանական անցումները, սիրո դրամայի նուրբ շերտերը՝ուսուցիչը պետք է աշակերտի առջև բացի երկու հեղինակների սիրո փիլիսոփյության առանցքային գիծը. հավերժական սիրո գոյության խորհուրդը, որը ուժգնանում է սյուժետային դրվագների վերջին հատվածում:

Ժամանակի և տարածության անափ տարածքներում ձգվում է սիրո մեղեդին: Կյանքի օրենքներն անջրպետ են դառնում սիրող սրտերի առջև. թաբձանում են տագնապի ու անհանգստության շերտերը: Գյուղական աշխարհի նահապետական սովորույթների դեմ ծառս է լինում Անուշի սերը, իշխանական բարքերի, քաղաքակիրթ աշխաչհի օրենքների դեմ լեռանում է սիրո դյութիչ ալիքներում թևածող Ջուլիետի սիրտը: Մի պահ թվում է, թե կփշրվեն այս փխրուն էակների սրտերը, սակայն երկու գործերում էլ թանձրացող խռովքը անսպասելիորեն զուգորդվում է ոգեշնչմանը. ծնվում է հոգում անթեղված տիեզերական ուժը՝ պատրաստ փշրելու ամեն մի կապանք ու արգելք: Այդ աստվածային ուժն է Անուշի մեջ կոտրում նահապետական աշխարհի կնոջ մտավախությունը, հանրության կաչծիքին ստրկացած կույր հնազանդությունը, և այդ խորհրդավոր ոգեշնչուն է նրան հասցնում տիեզերական տարածքները: Նույն խորհրդավոր, անմեկնելի ուժն է Ջուլիետին ոգեշնչում՝ փշրելով դեռափթիթ հոգու ամոթխածությունը և վախի բոլոր կապանքները: Հզոր սերն է Անուշին սիրած տղայի հետ փախուստի ուժ տալիս, Ջուլիետին՝ Կապուլետների մահաշունչ դամբարանը տանող թմրեցուցիչ հյութը խմելու կարողություն: Անուշը շատ լավ գիտեր իր արարքի՝ հյուրայիններին իրենից օտարելու հետևանքը: Բայց սիրո լույսը շղարշում է այդ հոգեվիճակը: Նույ լույսի հրդեհում է մեծագույն համարձակություն ձեռք բերում Ջուլիետը՝ գիտակցելով մահաշունչ դամբարանում կենդանի հայտնվելու մտքի սարսափը: Եվ երկուսի շուրթերից էլ վճռական ապհին՝ որպես աղոթք, նույն խոսքերն են դուրս հորդում. <<Սե՛ր, դու ինձ ուժ տուր>>: Մի պահ մոլեգին պտույտի մեջ են մտնում երկրային օրենքները և երկնային եզերքներում թևածող սիրո տանջանքները: Եվ լեռնացած այդ ուժերի առջև թուլանում է անգամ կյանքի խորհուրդը: Այդ պահը շատ լավ զգացել են և՛ Թումանյանը, և՛ Շեքսպիրը: Ճշմարիտ սիրո մեծությունը ցույց տալու համար երկու հեղինակներն էլ միմյանց դեմ կանգնեցնում են երկու վիթխարի ուժեր՝ սերը և իրական կյանքի պահանջը: Սիրո ցավի

ու կարոտի ալիքներում տրոփող Ջուլիետի սրտին հակադրվում է դայակի՝ կյանքի բնական ընթացքին հետևելու խորհուրդը՝ որպես կյանքի շարունակման տրամաբանական պահանջ.

Ռոմեոն արդեն աքսորի մեջ է.

Չի հանդգնի նա այլևս գալ ու պահանջել քեզ։

Լավն այն է, որ ամուսնանաս կոմս Պարիսի հետ։

Հոգովս եմ երդվում կբախտավորվես

Դու քո այս երկրորդ ամուսնության մեջ։

Նույն խորհուրդն է տալիս Անուշին անցվոր եղբայրը.

Ինչու՞ իզուր հանգցընում ես

Ջահել կըրակն աչքերիդ։

Ներա ամբախտ ջիրմի վըրա

Պաղ ջուր ածա աղբյուրի,

Դու էլ գընա, նոր սեր արա,

Էսպես է կարգըն աշխարհի։

Պատահակն չէ, որ Թումանյանը 1916-ին պոեմի հիմնական մշակմանը կատարում է մի լրացում՝ անցվոր եղբոր և Անուշի զրույցը։ Նա էլ Շեքսպիրի նման զգացել է ճշմարիտ սիրո ուժի վիթխաչի հեղեղները, որի առջև խոնարհվում է անգամ կյանքի խորհուրդը. այդ ուժի առջև ընկրկում է կյանքի և միջավայրի իրական, պահանջը՝ ապրել և ժամանակի ընթացքում մեղմել ցավը։ Սա կլիներ սովորական սիրո մի դրամա, չկայացած սիրո զուտ տխուր պատմություն։ Սակայն երկու հեղինակներնն էլ մեծ սիրո որոնման ճանապարհին են, և այդ ճանապարհին սովորականը, առօրեականը փշրվում է, մեծ սերը վեր է բարձրանում կյանքի սահմաններից, հասնում աստղե ոլորտներ։ Այստեղ սիրո հոգեբանության զարգացման նոր շերտեր են բացվում, նոր խորհուրդներ. . . Որքան ընդարձակվում են սիրո ցավի

բացվածքները, մեծանում՝ հոգու խռովքը, այնքան սիրող սիրտը դառնում է աներեր։ Սիրո անչափելի տարածքները չեն կորչում կյանքի բարդ հորձանքներում։ Բոլոր ժամանակների և տարածությունների սահմանները փշրվում են սիրո ճանապարհին։

Սիրո ցավի ալաիքներում անզոր թևածում է սիրահար հոգին, մի պահ մարմրում է հոգու կրակը՝ մե՛րթ անձնատուր լինելով հուսաբեկ միանձնությանը, մե՛րթ անցած երազ օրերի դյութիչ անուրջներն, մե՛րթ ստեղծելով սիրած էակի հայտնության տեսիլքը։

Երազի որոնման ճանապարհին միայնակ մնացած Անուշը իր տառապանքներն է չափում տեսիլքի և իրականության աներևույթ հատումներում։ Հյուսվում է տեսիլքների գեղեցիկ հեքիաթը ուր հոգու արթնացումը ներդաշնակվում է չմեռնող կյանքի ալիքներին սակայն ցավի արահետները մթագնվում են իրական գույների թանձրացմամբ, և ավելի են ուժգնանում բաժանման տառապանքի շեշտերը։ Ունկնդիր տեսիլքների խորհրդավոր շշուկներին՝ սիրող սիրտը տենչում է մտերիմ ձայնի, ու տեսլացած գալիս է սիրած տղան՝ <<ցողոտ, շաղոտ, հանաքներով ու խաղով>>։ Պատրանքի մեջ հառնում է երազ-ցնորքի դյութական ակնթարթը, որը մարում է սիրո կարոտի արձագանքներում։ Փշրվում է տեսիլքը. բացվում է սառը ճշմարտությունը. <<Մի դիակ է լո՛ւռ, սառած, արյունը չոր դեմքի վրա, աչքերն ակնթարթ, սպիտակած>>։ Կարոտի սպասումներին միանում է հավերժ կորցրածի գիտակցումը, և կտրվում է սիրո երկրային երգը՝ երկնքում հավերժ միացնելով այդ երգի ընդհատված հնչյունները։ Ծանրանում է մենակության զգացումը՝ որպես մերկ ուրվական։ Անջատման ցավ, բաժանման մորմոք, մենակություն, կարոտ-հոգու կեցության այս վիճակները շաղախվում են, ձուլվում բարձրագույն ձևի մեջ. տիեզերքի անհունում կանգ է առնում երջանիկ վայրկյանը.

Էն վեհ վայրկենին չըքնաղ գիշերի՝

Երկընքի անհո՛ւն, հեռու խորքերից,

Անմուրազ մեռած սիրահարների

Աստղերը թրռած իրար են գալիս,

Գալի՛ս կարոտով մի հեղ համբուրվում

Աշխարհքից հեռո՛ւ, լազուր կամարում. . .

Տառապանքի, հուսահատության ճամփեքին ճառագում է սերը՝ որպես հոգու կեցության աստվածային շնորհ։ Անուշը թողնում է անհրապույր աշխարհը՝ հանգչելու <<էն վեհ վայրկենի մեջ>>, որը լի է <<աստվածային անհաս խորհրդով>>, <<նրա բովանդակ սուրբ գթով>>։

Աստվածային նույն ակնթարթի մեջ են հավերժանում նաև Շեքսպիրի հերոսները։ Ջուլիետը շուրջն ամեն ինչ ստանում է խորհրդավոր կերպարանք, սիրտը լցվում է սև տագնապներով. մահվան մերկ սառնության մեջ խլանում են սիրո, ցավի ու կարոտի կանչերը։ Եվ աշխարհից ու սիրելիից խռոված հոգին ձգվում է մահվան գիրկը՝ անեզերքի ու անվախճանի լուսե հովտում հավերժ փարվելու սիրած էակին։ Նրանց ողբերգական իրավիճակը ձեռք է բերում դրամատիկ հնչեղություն, ապա ալիքվում են հերոսական բռնկումով։ Տիեզերքում թևածող նրանց հոգիները փշրում են կյանքի կապանքները, կոտրում մարդկանց անգութ հոգիները։ Եվ հաղթում է նրանց սերը. <<Նրանց սիրո լուսաբացը իր հետ բերում է աղոտ հաշտություն>>։

Այսպիսի հոգեբանական նուրբ դիտարկումներով, ներառարկայական կապերի օգտագործմամբ ուսուցիչն աշակերտի առջև բացում է սիրո հոգեբանական հուզաթաթավ շերտերը՝ ցույց տալով երկու մեծ հեղինակների ստեղծագործություններում սիրո հոգեբանության զարգացման գեղագիտական ընդհանրությունները։ Նույնն են հոգեբանական իրավիճակները, որոնք պատկերվում են աշխարհագրական տարածքների տարբեր օղակներում։ Աշակերտը ներառարկայական կապերի օգնությամբ կզգա երկու հեղինակների բանաստեղծական ներշնչումը, տարերքը, որով նրանք փորձել են մարդկային հոգեբանության ոլորտներում հայտնաբերել սիրո զգացողության տարբեր կտրվածքներ՝ որոնելով այդ անափ զգացմունքի տարողության ուղին։ Իսկ այնտեղ, ուր ընդհատվում է այդ ուղու իրական սահմանգիծը, սկիզբ է առնում տիեզերական ոգեղեն ճամփեքում հավերժացող աստվածային տեսիլքը։ Սա է երկու հանճարների սիրո փիլիսոփայության խորհուրդը։

Ներառարկայական կապերի օգտագործումը կարևորագույն մեթոդներից է, որոնց միջոցով աշակերտը կզգա, որ տարբեր հեղինակներ իրենց գրվածքներում հարազատանում են կյանքի իրական զգացողությամբ, պատկերվող հերոսների, սյուժետային դրվագների, իրադարձությունների անվիճելի հավաստիությամբ, հերոսների հոգեվիճակների նուրբ զգացողությամբ, սակայն տարբեր են նարնց պատկերած աշխարհը, միջավայրը, բարքերն ու կենցաղը։ Աշակերտը կկարողանա տեսնել գրական երկի ազգային առանձնահատկությունները, գրելաոճի ինքնատիպությունը։ Նրանք չեն դժվարանը որոշել մանավանդ թեմատիկ, գաղափարական, ժանրային ու գեղարվեստական առանձնահատկություններով ընդհանրացվող ստեղծագործությունների նրբին տարբերությունները, պատկերավորման համակարգի բազմաձևությունը և բազմազանությունը։

Եզրակացություն

Ներառարկայական կապերով հագեցած դասերը հանգեցնում են նրան, որ սովորողին շրջապատի աշխարհի այլ մշակույթի գրականությանը ծանոթացնելը կարևոր ու արդյունավետ ազդեցություն ունենա աշակերտի աշխարհաճանաչման համար:Այսպիսի դասերի միջոցով սովորողի մեջ զարգանում է ճանաչողության ակտիվությունը, երևակայություն , նրանք սովորում են քննարկումներ , հարցազրույցներ վարել, փաստարկներ բերել, դրանով նաև աշակերտը հասնում է նյութի ամբողջական, համապարփակ ընկալմանը , ինչը խթանում է սովորողի ճանաչողական ստեղծագործական գործունեությանը: Ներառարկայական կապերի ապահովումը գրականության դասերին էապես նպաստում է նաև սովորողների լեզվական և մշակութային կարողունակությունների զարգացմանը, առարկաների, այլ բնագավառների միջև խաչվող ընդհանրություններ գտնելուն, և ի վերջո , գրական ճաշակ ձևավորելուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ. Թումանյան, «Երկերի լիակատար ժողովածու» հ 7, Երևան 1995 թ. , էջ 230
2. Ն. Թումանյան, «Հուշեր և զրույցներ», Երևան 1987 թ. , էջ 215
3. Հր. Թամրազյան, «Հովհ. Թումանյան. նանաստեղծը և մտածողը», Երևան, 1995 թ. , էջ 180
4. Պուշկին, Ա. , «Ընտիր երկեր». հ. 3, Երևան, 1956 թ. , էջ 62
5. Վ. Շեքսպիր,« Ընտիր երկեր, երկու հատորով»
6. Ամիրջանյան Յու. «<<Մանկավարժություն>>
7. Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ 2016 թ.